

ների պատմածից կարելի է եզրակացնել, որ Բուստաղէօյի անուամբ զանազան ժամանակներում օգտուել են ծարպիկ սըրիկաներ եւ իրենց ժամանակակիցներին մոլորացրել:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

— Խտակական կառավարութիւնը մեծ ուշադրութիւն է դարձնում մանկական պարտէզներին և առհասարակ դպրոցներին զարգացման վերայ: 1895 թուի վերջին Խտակայում կային 2,572 ծաղկոցներ, որոնք յաճախում էին 502,734 մանկունք: այդ ծաղկոցների ընդ որ ծախքը հասնում էր 6,540,909 ֆրանկի, այսինքն, 2,620,000 ռուբլու: այս դրամը հայթայթւում է տէրութեան նպաստով, թողակադրամով եւ գաւառական հասարակական կանոնադր նպաստներով:

— Լնդհիական ժողովրդական դպրոցներին ուսուցիչներն 1895 - 1894 թուականների ընթացքում հետևեալ ռոմիկներն էին ստանում. եկեղեցական դպրոցների աւագ ուսուցիչն ստանում էր 1,200 ռուբլի, օգնականը - 740 ռ. աւագ ուսուցչուհին 740 ռ. օգնականը - 610 ռ. իսկ Schools Board-ի ուսուցիչներն ստանում էին 1,600 եւ 1,050 ռ. ուսուցչուհիք 1,150 եւ 810 ռ:

— Եկեղեցի - դպրոցներին դէմ է Ռուսաստանում Ուֆիմի թեմի առաջնորդ սրբազան Դիոնեսիոսը. աչքի առաջ ունենալով որ վերջին ժամանակներս ծախքերի թեթեւութեան համար Ռուսաստանում շատ տեղ եկեղեցու եւ դպրոցի համար մի շէնք է շինում, սրբազան Դիոնեսիոսը յայտնում է, որ անվայել է սրբութիւն սրբոցի առաջ թոյլ տալ որ աշակերտները կոռւն, վիժեն, հայոյեն եւն:

ՊԱՏԺՈՒԹԻ ԲԱՐԵԳՈՐԺ

Ռուս քաղաքներն հաղորդում են, որ շուտով Պետերբուրգ պիտի քննուի մի շատ տարօրինակ գործ: Ետալէրգ ամուսինները մեղադրում են, որ առանց օրինական թոյլտուութեան ընկերակ որքերին ապաստանարան են տուել եւ կրթել իրենց տան մէջ: Ետալէրգը այդ որքերին գրել կարդալ, թուաքանութեան եւ երգեցողութիւն են ուսուցել առանց որ եւ է նիւթական օգտի, ընդհակառակն իրենք են հոգացել այդ որքերի ապրուստը: Այս բարեգործ ամուսիններն այժմ պատասխանատու են ժանաշուած օրէնքի 1049 յօդուածով եւ պիտի դատաւարտուեն հաւանօրէն 200 ռուբլի տուգանքի:

ԺՈՂԱԳՆԱՅՈՒԹԻՄ

Ալիքները փոթորիկ ժամանակ հանգստացնելու համար ցարդ գործ էին դնում ձէթը, որ մեծ քանակութեամբ ածում էին ջրի վերայ, որով ալիքները շատ չէին բարձրանում, այժմ մի աւելի դիւրին եւ աժանագին միջոց է գտնուել: Հընարուած է մի լայնածաւալ ուղկամածեւ ցանց, ոց փոթորիկ ժամանակ տարածում են նաւի շրջապատի ջրերի վերայ, այս ցանցն արգելում է ալիքներին բարձրանալ եւ նաւը խորտակել:



ԱԶԳԱՅԻՆ

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Ամսոյս 6-ին Ս. Էմիանի Մայր տաճարում հանդիսաւոր մաղթանք կատարուեցաւ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԱԼԷԲՍԱՆ ԴՐՈՒԶԻ անուանակոչութեան առթիւ: Ահաւասիկ նորին Վեհափառութեան հեռագրի պատասխանն է շնորհաւորական հեռագիրը:

**ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ
ԱԿԱՌԱՄԱՐԱՆՈՒ.**

Յարսկ. Սե. 9. 7 դեկտեմբ. 42 ժ. 47 ր. զինի կէսգիշերի
Է.ՋՄԻԱԾԻՆ.

ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ի սրտէ շնորհակալ եմ վասն մատուցեալ Ինձ շնորհաւորութեանց եւ բարեմաղթութեանց Ձերոց:

ՆԻԿՈԼԱՅ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ.

ՅԱՐՍԿԱՅԻՆ ՍԵԼՈ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՆՈՐ ԿԱՅՍԵՐ.

Ի մեծի աւուրս Եւուանկոչութեան Ձերդ Կայսերական Մեծութեան ջերմագինս աղօթելով վասն Թանկալին կենաց Ձերոց, գամ մատուցանել Ձեզ, Եմենաբարեպաշտ Արքայ, Եմմէ, ի հոգեւորականութեան եւ հօտին իմոյ կողմանէ զսրտեւանիւն շնորհաւորութիւնս հոգեբուրդի բարեմաղթութեամբը:

ԽԿՐՏԻՉ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

6 դեկտեմբ. 1895.

Ի. Ռ. ՈՒՍԱՀԱՅԲ.

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ.

Թեմիս եկեղեցական—ժխական դպրոցների տեսուչ նշանակուեցաւ Ս. Էջմիածնի միաբաններից Արժանապատիւ Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանը:

Զ. ՏԱՀԿԱՀԱՅԲ.

Տաճկական Հայաստանի բոլոր գաւառներում կատարուած կոտորածների, աւարառութիւնների եւ դադանութիւնների մասին սկսան զեկուցագրեր տեղալ Հայրապետական Դիւանը, Նոյեմբերի 20-ից մինչեւ դեկտեմբերի 20 զեկուցումներ են ստացուել Կոստանդնուպօլսից, Տրապիզոնից, Ներդայից, Կարինից, Մուշից, Վանից, Սեւաստիա-յից, Դիլիսից եւ Կիլիկիայից, Այդ վաւերաթղթերն այնպիսի սոսկալի փաստեր են ամփոփում իրենց մէջ, որ անհնարին է դրանցից իւրաքանչիւրն մինչեւ ցվերը կարգալ մարդկային այդպիսի դադանութիւններ լսելու համար պէտք է պողովատէ նեարդեր ունենալ, Սրբապղծութեանց մասին պատմուած դէպքերն անօրինակ են ամբողջ պատմութեան մէջ, աւերուած ու այրուած են եկեղեցիք եւ հին ուխտատեղիք, պատուոտած ս. Գրքերը, սրբութիւն սրբոցը անարգուած . . . կոտորուածներից աւելի արգահատելի են կենդանի մնացածները, որոնցից իւրեք են ամեն ինչ եւ այսօր ցուրտն ու սովը շարունակում են աւարտել սկսուած ջնջումն հայ քրիստոնէութեան, Այսպիսի թշուառութեան ժամանակ միայն հանրամարդկային օգնութիւնը կարող է փրկարար լինել եւ ինչպէս լրագիրներն հաղորդում են, Աստուած շարժել է մինչեւ իսկ հեռաւոր Ամերիկացիների գութը թշուառ հայերի վրայ եւ նրանց

կարմիր խաչի ընկերութիւնը վճռել է 5,000,000 դոլլար նպաստ հասցնել Հայաստան: Այսին նպաստներով միայն թերեւս հնար լինի կասեցնելու այն սարսափելի սովամահ կոտորածն, որ տիրում է Տաճկահայքում:

Բոլոր աշխարհին յայտնի է, թէ ինչ սոսկալի հալածանքի ենթակայ է այժմ Թիւրքիայում Հայաստանացի եկեղեցիներն և հայքրիստոնեայ ժողովուրդը: Ներոնի և Դիոկղեանոսի հալածանքները, մեր պատմութեան արեամբ գրուած էջերը, մինչևանգամ վերջին ժամանակների նոյն թիւրքաց խրժժութիւնները բոլորների վերաբերութեամբ մոռացուում են այժմեան կոտորածների և ամէն տեսակ վայրագութեանց առաջ, որոնց զոհ է գնում թշուառ հայ ժողովուրդը: Այս օրի համար այլ ևս գաղտնիք չէ, որ կոտորուած հայերի թիւը մի քանի տասնեակ հազարով պէտք է հաշուել: առաւել ևս աներկբայելի մի իրողութիւն է, որ մի քանի հարիւր հազար հայ այս րոպէիս անտուն, անտէր, անհաց՝ ցրտի ու սովի զոհեր են, որոնց փրկելու համար այս ու այն կողմից հասնող պատահական նպաստները միանգամայն անօր են:

Չնայելով Թիւրքիայի հայոց այս արգահատելի վիճակին՝ քաղաքակիրթ աշխարհում գտնուում են անձինք, որոնք չկարողանալով ուրանալ ճշմարտութիւնը՝ հայոց իրենց են համարում այդ թըշուառութեան նախապատճառ: Իբր թէ հայերը գրեթէ ամենուրեք նախարարական լինելով՝ գրգռում են մոլեռանդ մահմեդական խուժանի վրէժխնդրութիւնը: Լրագիրներ կան, որոնք վերջին տխուր դէպքերի սկզբից մինչև այժմ յիշեալ հայեացքն հիմք առած՝ դատապարտելով դատապարտում են հայոց և պաշտպան են հանգիստնում հալածիչներին:

Այդպիսի հայեացքների դէմ է ուղղած «Вѣст. Европы» հանգիսի դեկտեմբերի համարի մէջ տպուած մի յօդուած, որի հեղինակը մի առանձին քննիչ զգացմունք չունի հայ ազգի համար:

«Տաճիկներն, ասում է յօդուածագիրը, առ հասարակ բարեսիրտ և համակրելի ժողովուրդ են: նորա շատ բանով աւելի համակրելի են իրենց հըպատակ ցեղերից, որոնց թուում և հայերից»: Հայ ազգի մասին այս կարծիքն ունեցողի անաչառութիւնն ակնյայտնի է, երբ նա խօսում է հայոց կրած տառապանքների մասին: Յօդուածագիրը նախ համառօտակի թուում է հօկտեմբերին ու նոյեմբերին տեղի ունեցած կոտորածները Տրապիզոնում, Կարինում, Բաղեշում և այլն, և յառաջ է բերում այնպիսի փաստեր, որ ապացուցանում են թէ հայերը ոչ միայն նախարարական չեն եղած, այլ և միշտ անակնկալ յարձակմանց են ենթարկուել, թէ թիւրք կառավարութիւնը ոչ մի տեղ ոչ մի փորձ չէ արել կոտորածների առաջն առնելու և, ընդհակառակը, զինուորներ է կանգնեցրել այնպիսի տեղերում ուր հայերը կարող էին պատսպարուել ու ազատուել կոտորածից, և այդ զինուորներն իրենք հրացան են արձակել հայոց վրայ: Թուելով երեք շարաթուան ընթացքում տեղի ունեցած կոտորածները, Պետերբուրգի ամառգիրը աւելացնում է. «Նոյնքան մարդ կը զոհուէր այդ ժամանակամիջոցում, եթէ իսկական պատերազմ լինէր կատարելագործուած թնդանօթներով: Բայց պատերազմի ժամանակ երկու կողմիցն էլ կորուստ լինում է իսկ այստեղ միայն մի կողմին են պատկանում բոլոր

զոհերը: հաղարաւոր սպանուած քրիստոնեաներին հազիւ մի քանի տաճիկ է դալիս: Առողորածի ժամանակ ընդգրկուած զրեթէ բնաւ չէ լինում, որովհետև զինուածներն ու իշխանութիւն ունեցողները յարձակուում են անդէնների վրայ, ոչ միայն տղամարդկանց, այլ և կանանց ու երեխայոց: բացի դորանից այդ անդէնները պատկանում են մի խաղաղ, արդիւնաբերող ցեղի, որ երբէք չէ ունեցած քաջութիւն կամ արիութիւն: Թիւրքերը կամ թիւրքասէրները կամենում են հաւատացնել թէ հայերը կրկնապատկում են իրենց զոհերի թիւը: Նոյն աղբիւրները միշտ ցոյց են տալիս թէ շատ մահմեդականներ ևս սպանուած են, և իբրև ապացոյց յառաջ են բերում մի տեղ մի թիւրք սպայի մի այլ տեղ հինգ կամ տասը թիւրք զինուորի սպանութեան դէպքեր, մի և նոյն ժամանակ կարծես զօրութեամբ իմացուում է թէ մի թիւրք սպայի կամ զինուորի կեանքը հաւասար է հարիւրաւոր և հաղարաւոր չնչին հայերի կեանքին: Ա. Ի. Ենայի Polit. Korresp. լրագրի Կ. Պոլսոյ թղթակցի հաշուով բոլոր վերջին խժժութեանց զոհ են գնացել 15,000 հայ: այս թիւը յառաջ է բերուում իբրև հերքումն հայկական աղբիւրների չափազանցացրած տեղեկութեանց: Միայն 15,000 հոգի են սպանուած, որոնց թուում կանայք և երեխաներ: Աւրեմն ռքան զոհ է հարիւրաւոր քաղաքակիրթ մեծ աղբերին վրդովելու համար»: Այնուհետև յօդուածագիրը մատնացոյց է անում այն իրողութիւնը, որ մի քանի ուսու լրագիրներ հայերին են ընդհարմանց մեծ մասի նախապատճառ համարում և հաւատացնում են թէ Անգլիան կողմնակի քաղաքական շահեր ունենալով այդ բանում՝ գրգռում է հայերին և ապա աւելացնում է. «Այդ որ էլ լինի արիւնհեղութեանց պատճառը, այդ արիւնհեղութիւններն այնու ամենայնիւ շարունակուում են և սաստկանում: աւելի և աւելի ընդարձակ ասպարէզ ընդունելով... Մի քանի հայերի կամ անգլիացիների անկանոն գործողութեանց պատճառով միթէ կարելի է ռազմաթիւ քաղաքների ու գիւղերի անպաշտպան բնակիչներին մատնել կատաղած քրդերի վայրագութեանց: Եթէ հայերը որ և է ծրագիր ունին ապագայ հայկական թագաւորութեան համար, այդ չէ կարող կատարուել միայն Անգլիայի կամքով, առանց միւս տերութեանց և ամէնից առաջ Ռուսաստանի համաձայնութեան: Ռուսաց դիւանագիտութիւնը միշտ կարող է ասել իւր veto-ն այն նախագիծների դէմ, որ ցանկալի չեն կամ անյարմար են Ռուսաց շահերի տեսակէտից: Ապա ուրեմն ի՞նչ կարիք կայ խառնելու այդ վաղաժամ հոգսերը մեր մերձաւոր դրացի հայերի վերաբերութեամբ անպատիժ կերպով գործ գրուող արիւնուշտ արհաւիրքների իրական և հրատապ խնդրին»:

Յօդուածագիրը ցոյց տալով հայկական քաղաքական ընդարձակ ծրագիրների մասին եղած անհեթեթ կարծիքները, իրաւամբ նկատում է. «Ամբողջ հայկական խնդիրը թիւրքահայատակ հայերին այնպիսի տարրական բարիքներ չնորհելուն է վերաբերում, ինչպէս անձի և գոյքի ապահովութիւնն է, որ կանոնաւոր համայնակեցութեան առաջին պայմանն է: բայց այժմ հանդամանքներն այնպէս են, որ թիւրք կառավարութիւնը ուրախ կը լինէր, եթէ հնար լինէր միանգամից բնաջինջ անել իւր բոլոր հայ հպատակներին, որոնց պատճառով այժմ նա ստիպուած այնպիսի անախորժ ընդհարումներ է ու-

նենում եւրոպական տէրութեանց հետ: Սորանից յետոյ յօգուածագիրը դատապարտում է Ռուսաց մի քանի լրագիրներին վարմունքը, որոնք այժմ մեղադրում են Անգլիային ճիշդ այն գործողութեանց համար, որ անում էր իւր ժամանակին Ռուսաստանը Բոլլարիայի վերաբերութեամբ և որոնց չափերը Անգլիայի յանցանքն էր համարում ուսումնառել:

«Բայց այն ժամանակուան և այժմեան հանգամանքների տարբերութիւնն ահագին է, որ ի զուր ի նկատ չեն առնում մեր հայրենասէրները: Այն ինչ որ ներքին էր Թիւրքիայի բարեկամներին եօթանասնական թուականներին, միանգամայն աններքին է մեր լրագրների համար այժմ»: Յոյց աւելով որ անարգարացի են այն կասկածները որ ուսւ լրագիրներն ունին Անգլիայի անշահասէր դիտումների մասին, այլ և մատնանիշ անելով ուսւ դիւանագիտութեան անցեալում գործած սխալները, յօգուածագիրն աւելացնում է. «Անցեալի սխալներից և խրատներից յետոյ պէտք էր աւելի զգոյշ լինել մեղադրանքի և յարձակումների նկատմամբ, որ ոչ խորհուրդ ունին, ոչ նպատակ . . .

Մեր հայրենասէրները մի քանի անգամ հիմնովին փոխել են իրենց կարծիքները Թիւրքիայի մասին վերջին պատերազմից յետոյ, ենթարկուելով ընդհանուր տպաւորութեանց և այլևայլ արտաքին հանգամանքների, ուստի մեր լրագիրներին չի վայելիլ անգլիացոց մեղադրել անհետեւողութեան և շահասիրութեան համար: Արեւելեան խնդրում Անգլիան գործում է մեզ հետ ձեռք ձեգքի տուած և հաւատում է մեզ լիովին, նա ոչինչ չէ կամենում գործել ինքը, առանց միւս տէրութեանց համաձայնութեան, և այսպիսի պայմաններում կասկածել նորա գործունէութեան շարժառիթների և դիտաւորութեանց վրայ՝ նշանակում է միայն վնասել այն միութեանը, առանց որին ոչ մի արդիւնքի չէ կարելի հասնել Վ. Պօլսոմ»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՔԱՂԱՌԱՅԻ Ի ԿՈՆԿԱԿԱՅՆ ՎԵՂԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ յանուն բժիշկ պ. Գրիգոր Մ. Նազարեանցի ի Քիշնե համարաւ 1074, որով շնորհի նմա կոչումն պատուաւոր հոգաբարձուի վասն անձնուէր ջանից և ծառայութեանց յերկսեռ գարոցս մեր Քիշնե ի ըստ վկայութեան Բարձր. կառավարչի թեմին Յուսիկ վ. Մովսիսեան:

Կոնդակ յանուն նոտար պ. Մարտիրոսի Չայցեան ի թէպոսիա համրւ. 1076, որով օրհնին անձնուէր ջանք նորա և նուիրաբերութիւն վասն փոխելոյ ծախիւք իւրովը զհին ձև կաթուղիկէի Տաճարին Ս. Խաչ վանուց Հին Ղրիմու և վերածելոյ ի ձև կաթուղիկեայց հայաստանեայց եկեղեցւոյ և վասն նորոգելոյ զհին տարիւրն նոյն վանուց. ըստ վկայութեան Գեղ. Խորէն եպիսկոպոսի Ստեփանէ:

Կոնդակ յանուն Սինօգի Ս. Էջմիածնի

համրւ. 1102, որով առաքեցաւ հաստատեալ նախահաշիւ Մ. Աթոռոյ որ վասն 1896 ամի:

Կոնդակ յանուն թեմակալին Տփիսեաց Դէորդ Արքեպիսկոպոսի հմրւ. 1127, ի պատասխանի Յայտարարութեան իւրոյ զկառավարութենէ ներսիսեան Հոգ. գարանոցին Տփիսեաց:

Կոնդակ յանուն Մեսրոպ վարդապետի Տէր Մովսիսեան միաբանի Մայր Աթոռոյս համրւ. 1130, որով կարգի թեմական Տեսուչ եկեղեց. — ծխակ. գարոցաց թեմին նրեանայ:

Կոնդակ օրհնութեան յանուն բարեպաշտ ամուսնոց պ. Հայրապետի և Տիկին Դշխուհի Խաչատրեանց ի Նոր Բայազիտ, հմրւ. 1151, վասն նուիրաբերութեանց իւրեանց ու անութոց և սպասից ու կարապետ եկեղեցւոյ քաղաքին Նոր Բայազիտոյ:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆ. ՎԱՐՁ. ՅԱՆՁՆԱ-

ԺՈՂՈՎԻ.

Մինչև դեկտեմբերի վերջը ուսուցչաց ընդհանուր ցուցակի մէջ մուծուած են.

կարգ.

1. Թեկղի եփրեմեան Իսահակեանց . . . ԺԳ.
2. Նունէ Դաբրիէլեան Սունդուկեանց . . . Ժ.
3. Յիկին Աննա Սողոմոնեան Տէր Յակոբեանց Ժ.

Իրեւ ուսերէնի քերականութեան ձեռնարկ եկեղեցական—ծխական ուսումնարաններում գործածելու համար ընդունուած է հետեւեալ դասագիրքը.

А Преображенскій. Начальная русская грамматика, съ приложеніемъ письменныхъ и устныхъ упражненій. Для городскихъ и сельскихъ народныхъ училищъ. Изд. кн. магазина В. Думнова. Москва. Цѣна 20 коп.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐԾՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ.

- | | |
|---|-----|
| 1. Տարուայ վերջին , Կ. Վ. | 433 |
| 2. Նուակցութիւնները 1. Մոնո. Թարգմ. | 437 |
| 3. Մեծն Աթանաս Թարգմ. Ե. Վ. | 439 |
| 4. Եզեղծեցան Ջրոտիւն | 462 |

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ.

- | | |
|---|-----|
| 5. Հին Հայ Երգիչներ | 463 |
| 6. Ջրօրհնեաց երգերը 10. Գ. Դ. | 469 |
| 7. Սասանեան Տէրութեան պատմութիւն Թ. Նեօլէքէի . Թարգմ. Ն. Բ. | 474 |

ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ — ՄԱՆԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ.

- | | |
|--|-----|
| 8. Գանակոծութիւնը եւ ուրիշ մարմնական պատիժներ Դարոցական կարգապահութեան մէջ 10. Ե. Կ. | 473 |
| 9. Տղայ Դաւթի եւ 10. Վ. | 484 |
| 10. ՄԱՆԱԿԱՆԱԿԱՆ | 487 |

ԱԶԻԱՅԻՆ.

ԵԶԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ 488

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Հեռագիրներ

1. ՌՈՒՄԱՆԱՅԻ

Երեւանի Թեմ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՅՆԱՄՈՍԱԿԱՆ.

ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ